Известия НАН РА, Науки о Земле, 2005, LVIII, №2, 59-61

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱԳԱՅԻ ՉՏՐՈՒՎԱԾ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

(Լ. Հ. Վալեսյանի «Աշխարհագրական գիտությունների մեթոդաբանական և տեսական հիմունքներ» գրքի մասին)

Արդի հարափոփոխ աշխարհում տեղի են ունենում սրընթաց զարգացումներ հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, լինի տնտեսության, քաղաքականության, սոցիալական, թե հոգևոր-մշակութային ոլորտ: Փոխվում են յուրաքանչյուրի տեղը, դերը, նշանակությունը մարդկության կյանքում:

Այդ փոփոխությունները մեծ են նաև աշխարհի գիտական ճանաչողության բնագավառում, գիտության բոլոր ճյուղերում ու ենթաճյուղերում, որոնց համատեղ ջանքերով կերտվում է ժամանակակից աշխարհի գիտական պատկերը:

Աշխարհի գիտական պատկերի կերտումը սկսվել է հին հույներից: Նրանց օրոք էր, որ գիտությունը ստացավ սոցիալական ճանաչում և սկսեց դիտվել որպես բարձրագույն հոգևոր արժեք: Տեսական միտքը զուգորդվում էր բնության գործնական ուսումնասիրության հետ, աճում էր գիտության ճանաչողական ունակությունը, կերտվում էր աշխարհի գիտական առաջին միասնական պատկերը: Այն հետագայում պետք է կատարելագործվեր և ավելի ու ավելի մոտենար իրականությանը:

Սկզբում կերտվել է աշխարհի պատճառամեխանիստական պատկերը, որի արմատները հասնում էին Դեմոկրիտին ու անտիկ փիլիսոփայությանը:

Աշխարհի պատճառամեխանիստական պատկերացումը տիրապետող էր ընդհուպ մինչև 19-րդ դարը, երբ սկսվեց ձևավորվել աշխարհի նոր՝ ֆիզիկական պատկերը: Այն նույնպես գիտության տարբեր ճյուղերի միասնական ջանքերով 20-րդ դարում զարգացման նոր աստիճանի բարձրացավ և իր տեղը զիջեց նորագույն պատկերին:

Աշխարհի նորագույն գիտական պատկերի սկզբունքային տարբերությունը նախորդներից այն է, որ իր հիմքում դնում է մասերիայի, տարածության ու ժամանակի միասնությունը, ինչպես նաև միկրո, մեգո և մակրոաշխարհի միասնությունը:

Դրա հետ կապված նոր բովանդակություն է ստանում այդ պատկերի կերտմանը գիտության ամեն մի առանձին ճյուղի մասնակցության բաժինը:

Նոր իմաստ ու նշանակություն է ձեռք բերում միասնական գիտության ճյուղային բաղադրիչների՝ բնական, տեխնիկական, հասարակական, փիլիսոփայական, հետագա մերձեցումը, որը թելադրված է մարդու և մարդկային մտածողության ու գործունեության, վերջինիս հնարավոր արդյունքների ավելի խոր ու բազմակողմանի ուսումնասիրության անհրաժեշտությամբ:

Այդ ամենը նոր, շատ ավելի բարդ խնդիրներ է դնում նաև աշխարհագրության (աշխարհագրական գիտությունների համակարգի) առաջ, որին բաժին է ընկել աշխարհի միասնական պատկերի այն հատվածի կերտումը, որը հայտնի է «երկիր մոլորակի աշխարհագրական թաղանթ» անունով և որը հանդես է գալիս որպես աբիոտիկ, բիոտիկ և հասարակական երևույթների փոխազդեցության արդյունք, որպես չափազանց բարդ սուպերգեոհամակարգ: Աշխարհագրությունն է, որ իր էությամբ կոչված է զբաղվելու այդ սուպերհամակարգի և նրա բաղադրիչների՝ գեոհամակարգերի ոլորտների՝ քարոլորտի, մթնոլորտի, ջրոլորտի, կենսոլորտի, մարդոլորտի (սոցիոլորտի) զարգացման օրինաչափությունների, բնություն-հասարակություն փոխհարաբերությունների տարածաժամանակային դրսևորումների ուսումնասիրությամբ:

Դժվար չէ նկատել, որ ներկայումս աշխարհագրությանը ներկայացվող սոցիալական պատվերը որակապես տարբերվում է այն պատվերից, որը նա կատարել է մինչև այժմ և որով որոշվել է նրա հասարակական ֆունկցիան: Հայտնի է, որ դա հիմնականում եղել է աշխարհայացքային, ընդհանուր մշակութային ու գիտաճանաչողական: Այժմ էլ աշխարհագրությունն իր այդ ավանդական գործառույթը պահպանում ու զարգացնում է: Սակայն նրան ներկայացվող նոր սոցիալական պատվերը ավելին է: Այն պահանջում է գիտության այդ ճյուղի ոչ միայն ավանդական դերի մեծացում, մեթոդիկայի կատարելագործում, այլ նաև տեսական մակարդակի կտրուկ բարձրացում և դրա հիման վրա գիտագործնական ու կոնստրուկտիվ (կառուցողական) ներուժի հզորացում:

Վերջին տասնամյակներում աշխարհագրությունը զարգանում է հենց այդ ուղղությամբ: Դրա արտահայտությունն է նրա տեսական վերազինման այն բուռն գործընթացը, կտրուկ անցումը ներքին ռեֆլեքսիայի նոր բարձրագույն մեթոդաբանական մակարդակին: Դրա շնորհիվ է, որ համաշխարհային աշխարհագրական գիտությունը այսօր ի զորու է գործուն մասնակցություն բերել մարդկության առջև ծառացած հիմնախնդիրների լուծմանը, լինեն դրանք լոկալ, տարածաշրջանային թե համամոլորակային:

Այդ հիմնախնդիրների աշխարհագրական ասպեկտների ուսումնասիրության ու լուծման գործում այժմ աշխարհագրության անելիքների ու հնարավորությունների բացահայտմանն ու քննարկմանն է նվիրված Երևանի պետական համալսարանի տնտեսական և սոցիալական աշխարհագրության ամբիոնի վարիչ, աշխ.գիտ. դոկտոր, պրոֆ., Ռուսաստանի ԿԱ ակադեմիկոս Լեմվել Վալեսյանի նոր հիմնարար հետազոտությունը*:

---

* Լ. Վալեսյան, Աշխարհագրական գիտությունների մեթոդաբանական և տեսական հիմունքներ. Երևան ԵՊՀ հրատ., 2004, 264 էջ:

Աշխատության կարևոր արժանիքը պետք է համարել այն, որ հեղինակին հաջողվել է բազմակողմանիորեն հիմնավորված ներկայացնել աշխարհագրական գիտության զարգացման ներկա փուլի գլխավոր հատկանիշը՝ կտրուկ անցումը գիտական ճանաչողության էմպիրիկ մակարդակից տեսական մակարդակին: Այդպիսի անցումնային փուլեր ապրել կամ ապրում են գիտության առանց բացառության բոլոր ճյուղերը՝ պայմանավորված հասարակական պահանջի փոփոխություններով և գիտական ճանաչողության պրոցեսի ներքին տրամաբանությամբ: Աշխարհագրության պարագայում ևս այդ անցումը արտահայտվում է տեսական վերազինման տեսքով, երբ էապես փոխվում են մեթոդաբանական մոտեցումները, հայեցակարգերը, պարադիգմները:

Գրքում այդ հարցերի վերլուծությանը նախորդում է գիտական ճանաչողության՝ որպես հոգևոր գործունեության չափազանց բարդ կառուցվածք ունեցող ոլորտի, նրա հարկերի (էմպիրիկա ուսումնասիրության մեթոդների, միջոցների, եղանակների, հետ միասին, տեսություն, մեթոդաբանություն, փիլիսոփայություն) և մակարդակների (էմպիրիկա՝ տեսական) քննարկումը: Բացահայտվում են այն օբյեկտիվ պատճառները, որոնցով պայմանավորված է եղել էմպիրիկայի դոմինանտ վիճակը աշխարհագրության մեջ ամբողջ նախորդ ժամանակաշրջաններում: Դա լիովին բավարար է եղել նրա փաստագրական, գիտաճանաչողական ֆունկցիայի լիարժեք կատարման համար:

Անցյալ դարի կեսերից սկսած աշխարհագրական գիտական ուսումնասիրություններում դոմինանտ է դառնում տեսական մակարդակը:

Լ.Վալեսյանը ընդգծում և բազմակողմանիորեն վերլուծում է աշխարհագրության տեսականացման ետ մնալու գլխավոր օբյեկտիվ պատճառները. 1. նրա ուսումնասիրության օբյեկտի և առարկայի՝ տարբեր բնույթի (բնական, բնահասարակական և հասարակական) տարածքային համակարգերի, իմա գեոհամակարգերի, չափազանց բարդ լինելը և 2. համակարգային մոտեցման՝ որպես գիտության մեթոդաբանական կատեգորիայի թերմշակվածությունը, հետևաբար և ուշացած ազդեցությունը գիտության ավանդական ճյուղերի, դրանց թվում և աշխարհագրության վրա:

Աշխատության 4-րդ գլխում (աշխատությունը բաղկացած է առաջաբանից, 6 գլուխներից, վերջաբանից և ընդարձակ՝ 170 անուն, հայերեն, ռուսերեն և եվրոպական լեզուներով գրականության ցանկից) քննարկվում է աշխարհագրության տեղը գիտությունների դասակարգման ժամանակակից համակարգում: Վերլուծվում են օբյեկտային և մեթոդաբանական սկզբունքներով կատարված դասակարգումները և ցույց է տրվում դրանցում աշխարհագրության, որպես սահմանային գիտության տեղը բնական, տեխնիկական ու հասարակական գիտությունների փոխթափանցման հատվածում: Այդ համատեքստում էլ հատուկ քննության է առնվում աշխարհագրական գիտությունների համակարգի ներքին կառուցվածքը և ամբողջությամբ վերցրած համակարգի և նրա բաղադրիչների կապը դրանց հարակից ճյուղերի, մասնավորապես մաթեմատիկայի, քարտեզագրության, կիբեռնետիկայի, գեոինֆորմատիկայի ու սիներգետիկայի հետ (գլուխ 5):

Մենագրությունն ավարտվում է 6-րդ՝ «Տեսական աշխարհագրություն, գիտության ճյուղի ձևավորումը, կառուցողական նշանակությունը» գլխով: Գիտատեսական ընդհանրացման մեծ ներուժ է պարունակում առաջին ենթաբաժինը, որը նվիրված է աշխարհագրության մեջ մեթոդաբանական նորագույն մոտեցումների ու գիտական նոր պարադիգմների վերլուծությանն ու գնահատմանը:

Լ.Վալեսյանն առանձնահատուկ կարևորություն է տալիս այն մոտեցմանը, որ աշխարհի համընդհանուր գիտական պատկերը լինելով բազմադեմ, բաղկացած է ֆիզիկականից բացի նաև փիլիսոփայական, կենսաբանական, զգայատարածական, հոգևոր-մշակութային, իհարկե նաև աշխարհագրական պատկերներից:

Հիմնավորված ու ճշմարտացի է նրա այն պնդումը, որ Աշխարհի մասը կազմող Երկիր մոլորակի աշխարհագրական պատկերը (աշխարհագրական թաղանթը) արդյունք է վերը թվարկված մյուս «պատկերների փոխազդեցության ու նույնիսկ սինթեզման,.... որի արդյունքում ստացվում է բոլորովին նոր՝ իր բովանդակությամբ ու որակով մյուսներից տարբերվող պատկերը»: Դա վերաբերում է Երկրի այն շերտին, որտեղ ձևավորվել է աշխարհագրական թաղանթը և որի սահմաններում բնական ու հասարակական երևույթները գտնվում են սերտ փոխազդեցության մեջ, հանդես են գալիս համատեղ և ունեն տարածաժամանակային յուրահատուկ դրսևորում:

Աշխարհի աշխարհագրական պատկերը որպես նոր հայտնագործված ռեալ իրողություն և գիտական ուսումնասիրության առանձին օբյեկտ, այժմ համընդհանուր ճանաչման է արժանանում: Նրա ուսումնասիրության արդյունքում է, որ բացահայտվում են բնություն-մարդ-հասարակություն շղթայի մերօրյա բովանդակությունն ու զարգացման օրինաչափությունները և հնարավոր է դառնում նրա կանխատեսումն ու կառավարումը: Դա աշխարհագրական գիտություններին ներկայացվող նոր սոցիալական պատվերն է, որը հնարավոր կլինի կատարել, եթե դրանք բոլորը հենվեն ոչ միայն սեփական, այլև փիլիսոփայության ու մաթեմատիկայի նվաճումների վրա:

Հեղինակը առանձնահատուկ կարևորություն է տալիս աշխարհագրության կապերին ոչ միայն փիլիսոփայության ու մաթեմատիկայի, այլ նաև գիտության այնպիսի նորագույն ճյուղերի հետ, ինչպիսիք են գեոինֆորմատիկան, կիբերնետիկան և սիներգետիկան: Նա գտնում է, վկայակոչելով նաև այլ մասնագետների, որ վերջիններիս, հատկապես սիներգետիկայի սկզբունքների կիրառումը «... բեկումնային նշանակություն կարող է ունենալ... աշխարհագրական գիտությունների մեթոդաբանական-տեսական հիմքերի, ինչպես նաև կանխատեսման (կառուցողական) հնարավորությունների հետագա զարգացման ու ամրապնդման համար»:

Քննարկելով գեոհամակարգերի հետազոտության ընթացքում փակ և բաց համակարգերի մասին համընդհանուր տեսության կիրառման հնարավորությունը, Լ.Վալեսյանը ընդգծում է գեոհամակարգերի և ընդհանրապես աշխարհագրական օբյեկտների այն առանձնահատկությունը, որ նրանք արդյունք են մեծաքանակ ու բազմաբնույթ

արտաքին ու ներքին գործոնների համատեղ ու համագործակցված ազդեցության և նրանցում առկա է սիներգիզմի երևույթը: Դրանով պայմանավորված էլ գեոհամակարգերում նույնպես տարբեր գործոնների (աբիոտիկ, բիոտիկ, տեխնածին, սոցիալական), տարբեր պոտենցիալների ու էներգիայի տեսակների համատեղ արդյունքը ավելին է, քան առանձին բաղադրիչների ազդեցության արդյունքների թվաբանական գումարը:

Մինչդեռ ավանդական աշխարհագրությունը և նրա հարակից մյուս գիտությունները, որոնց սկզբունքները և հիմնարար պատկերացումները հիմնված են իրական աշխարհի մեխանիստական մոդելի վրա, պատրաստ չեն լիովին ընկալելու սիներգիզմի երևույթը և բացահայտելու և հետազոտելու այն խորությամբ:

Լ.Վալեսյանը բերում է Մոսկվայի պետական համալսարանի պրոֆեսոր, ակադեմիկոս աշխարհագետ Յու.Գ.Սաուշկինի կարծիքը գիտության պատմության մեջ աշխարհագրության մեթոդաբանությանն ու տեսությանը նվիրված առաջին հետազոտության՝ Վ.Բունգեի «Theoretikal Geography» գրքի մասին: Գրքի ռուսերեն հրատարակության (1967թ., էջ 24) առաջաբանում Սաուշկինը գրում է. այն՝ Բունգեի գիրքը «ամենից առաջ ստիպում է մտածել, մարդկային միտքը մղում է դեպի չտրորված ճանապարհ, բայց դա մեծ ապագայի ճանապարհ է: Բունգեի գրքում շարադրված գաղափարների, հնարների յուրացումը թե՛ գիտնականներին, թե՛ պրակտիկներին կմղի նոր հայտնագործությունների՝»:

Բունգեի գրքին Սաուշկինի տված գնահատականը առանց վարանելու պետք է հասցեագրել նաև Վալեսյանի գրքին, որը ի մի է բերում Բունգեի գրքի և համաշխարհային աշխարհագրական գիտության նորագույն հետազոտությունների հիմնական արդյունքները և հայ աշխարհագրական միտքը նույնպես մղում է «դեպի չտրորված ու մեծ ապագայի ճանապարհ»: Այն լավագույն նվեր է աշխարհագրությամբ զբաղվող և ընդհանրապես գիտական իմացության մեթոդաբանությամբ ու տեսությամբ հետաքրքրվող ամեն մի մտավորականի համար:

Լ. Վալեսյանի սույն աշխատանքի գիտական և մեթոդական նշանակությունը դուրս է գալիս ռեգիոնալ մասշտաբներից և ցանկալի է նրա թարգմանությունը կազմակերպել նաև օտար լեզուներով, որն անշուշտ պատիվ կբերի Հայկական աշխարհագրությանը:

Խ.Ե.Նազարյան,
աշխ.գիտ. դոկտ. պրոֆ.

Գ.Մ.Կարապետյան,
աշխ.գիտ. թեկ., դոցենտ

՝ Бунге В.Теоретическая география М.: Изд. Прогресс, 1967, 278 с.